ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ -ԳՀԱՊՁԲ-20-9/34» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 17-ը օգոստոսի 2020թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 1-ին բաժնի պետ Ա. Նազարյան,

գնահատողներ՝

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժնի պետ, բ/ծ գնդապետ Վ. Վահանյան,

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ԸԲ ավագ սպա, բ/ծ մայոր Մ. Գալստյան,

հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյանը:

Հանձնաժողովն արձանագրեց հայտերի բացման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակցի կողմից ներկայացված հայտն ուսումնասիրելուց հետո:

18.08.2020թ., ժամը 10:50-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/34» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/34» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/34» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«Բժշկական սարքի»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/34» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/h	Մասնակցի անվանումը
1.	«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ -ԳՀԱՊՁԲ-20-9/34» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Ա. Մաղաքյան)

2.1 «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտը էլեկտրոնային գնումների **Armeps (www.armeps.am)** համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի.

2. «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2. «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/34» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ա. Մաղաքյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Գնման առարկա	Չ/մ	Քանակը	Նախահաշվային գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների					
					Հ/հ	Անվանումները	Գնային առաջարկ /ՀՀ դրամ/			
							Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գին
	Նյարդավիրաբուժության համար նախատեսված էլեկտրական ուժային ունիվերսալ սարքավորման հավաքածու	լրակազմ	1	24,930,000	1.	«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ	19,920,000	4,980,000	0	24 900,000

3.2 «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Քանի որ «Բժշկական սարքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/34» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն հրավերի պահանջներին համապատասխան գնահատված հայտ ներկայացրած մասնակիցը միակն էր, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչպես նաև ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերի պահանջները, գնահատող հանձնաժողովը գների նվազեցման նպատակով **21.08.2020թ. ժամը՝ 10:30-ին** ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում) որոշեց ընտրված մասնակցին որոշելու նպատակով առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակցի՝ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի հետ վարել միաժամանակյա բանակցություններ և նիստը շարունակել այդ օրը:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը վերը նշված մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցեց նշված բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

21.08.2020թ. ժամը 10:30-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին կազմակերպված բանակցությանը մասնակցելու համար ծանուցված մասնակիցը չներկայացավ, ուստի վերջնիս կողմից հայտով առաջարկված գները թողնեցին առանց փոփոխության:

3.4 Ըստ ներկայացված տվյալների «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն ԱԱՀ չի վճարում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/34» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Մաղաքյան)

4.1 **21.08.2020թ.**-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկի հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/34» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված և ընտրված մասնակից հայտարարել՝ ***«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին:***

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/34» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/34» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները, **սույն ընթացակարգի շրջանակում անգործության ժամկետ չի կիրառվել, քանի որ հայտ էր նեկայացրել մեկ մասնակից:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Ա. Մաղաքյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/34» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Ա. Մաղաքյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/34» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Նազարյան
Գնահատող	Վ. Վահանյան
Գնահատող	Մ. Գալստյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Մաղաքյան